

Չարց Եթե առևտրային հաշվառքի սարքի միտումնավոր խախտումը պայմանավորված է մատակարարի գործողություններով, ապա մատակարարը ինչպե՞ս է կատարում վերահաշվարկ:

Պատասխան 1. Մատակարարը վերահաշվարկում է սպառողի կողմից ծախսված էլեկտրաէներգիայի քանակությունը և վերահաշվարկի արդյունքները հաշվի է առնում՝ սպառողին ընթացիկ ամսվա համար ներկայացվելիք վճարման հաշվում,

2. Որպես տույժ, սպառողին ընթացիկ ամսվա համար ներկայացվելիք վճարման հաշվում ձևակերպում է կանխավճար՝ վերահաշվարկված էլեկտրաէներգիայի արժեքի 100 %-ի չափով, սակայն ոչ ավելի, քան 10000 դրամ՝ բնակչության և 50000 դրամ՝ մյուս բոլոր դեպքերում: